

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ /ՄԾՏՅ/ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲՆԱԿԱՆ ԵՎ
ՏԵԽՆԱԾԻՆ
ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի կողմեր հանդիսացող Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,
հաշվի առնելով այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման հնարավորությունը,
որոնք չեն կարող վերացվել Կողմերի սեփական ուժերով եւ հնարավորություններով,
եւ այս փաստից բխող Կողմերի համակարգված գործողությունների պահանջը, որոնց
նպատակն է արտակարգ իրավիճակների կանխումը եւ հաղթահարումը,
ձգտելով հետագայում ընդլայնել զարգացող տարածաշրջանային համագործակցությունը՝ արտակարգ իրավիճակների դեպքում աջակցություն ցույց տալու
եւ, համատեղ ջանքեր գործադրելով, տուժած բնակչությանը համակարգված օգնություն
տրամադրելու նպատակով,
աջակցելով ՄԱԿ-ի ջանքերին միջազգային անհրաժեշտ օգնության բնագավառում,
հաշվի առնելով եւ հաստատելով տարբեր միջազգային տարածաշրջանային եւ ենթատարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում գործող համընդհանուր
նորմերն ու կանոնները, համապատասխան միջազգային կոնվենցիաները եւ համաձայնագրերը, ինչպես նաեւ նպատակ ունենալով ներդրում կատարել ազգային
օրենսդրության մշակման գործում,
խրախուսելով հետագա համագործակցությունը միջազգային անհրաժեշտ օգնության
բնագավառում Սեւծովյան Կարմիր Խաչի եւ Կարմիր Մահիկի Ընկերությունների Առաջին
Կոնֆերանսի /1997 թ./ կողմից արված նախաձեռնությունների հիման վրա,
արտահայտելով իրենց օժանդակությունը Միջազգային սեւծովյան փրկության կենտրոնի հիմնադրման գաղափարին՝ օգտագործելով ՄԾՏՅ երկրների եւ այլ
նմանատիպ
միջազգային կենտրոնների կուտակած փորձը,
համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Կիրառման ոլորտ

1. Սույն Համաձայնագիրը սահմանում է Կողմերի համակարգված գործողությունների սկզբունքներն ու շրջանակները բնական եւ տեխնածին աղետների

դեպքում:

2. Սույն Համաձայնագիրը կիրառվում է այնպիսի բնական եւ տեխնածին աղետների դեպքում, որոնք չեն կարող վերացվել Կողմերի սեփական ուժերով:

ՀՈԴՎԱԾ 2 Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոհիշյալ արտահայտությունները ունեն իրենց վերագրված հետեւյալ իմաստները՝

"օգնություն"՝ ապրանքներ, նյութեր, անձնակազմ եւ ծառայություններ, որոնք ապահովում է Օժանդակող կողմը հնդրող Կողմի կարիքները հոգալու համար, "Օժանդակող կողմ"՝ օգնություն տրամադրող Կողմ, "Օգնության խումբ"՝ Օժանդակող կողմի մասնագետների խումբ, որը նշանակվել է օգնություն ցույց տալու համար եւ հագեցված է բոլոր անհրաժեշտ միջոցներով, "իրավասու մարմին"՝ սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված գործողությունների կառավարման եւ համակարգման համար յուրաքանչյուր Կողմից նշանակված գործակալություն, "աղետ"՝ միջադեպ որոշակի տարածքում, որը ծագել է որպես այնպիսի դժբախտ պատահարի, վտանգավոր բնական երեւույթի, բնական կամ տեխնածին աղետի հետեւանք, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է մարդկանց կյանքի կամ շրջակա միջավայրի համար վտանգ պարունակող զգալի ֆիզիկական, սոցիալական, տնտեսական եւ մշակութային վնաս, "արտակարգ իրավիճակ"՝ հաճախ վտանգավոր իրավիճակ, որը ծագում է հանկարծակի եւ պահանջում է անհապաղ գործողություններ, "արտակարգ իրավիճակի վայր"՝ տարածք, որտեղ ստեղծվել է արտակարգ իրավիճակ, "արտակարգ իրավիճակների հաղթահարում"՝ որոնման, փրկարարական եւ այլ հրատապ վերականգնողական աշխատանքներ, որոնք ձեռնարկվում են արտակարգ իրավիճակների դեպքում եւ նպատակ ունեն փրկել մարդկանց կյանքը եւ պաշտպանել նրանց առողջությունը, նվազագույնի հասցնել բնապահպանական, մշակութային եւ նյութական վնասները, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակի վայրում առաջացած երկրորդական վտանգավոր հետեւանքները, "սարքավորումներ"՝ նյութեր, տեխնիկական եւ տրանսպորտային հարմարություններ, Օգնության խմբի ռազմական պաշարներ եւ դրա անդամների անհատական աշխատանքային սարքեր, "օգնության բեռներ"՝ նյութական միջոցներ, որոնք հավաքվել են անվճար, ազատված են հարկերից եւ բաշխվում են աղետից տուժած բնակչության շրջանում, "անձնական տվյալներ"՝ բոլոր տեսակի տեղեկություններ սույն Համաձայնագրի

կապակցությամբ որոշակի արտակարգ իրավիճակներին առնչվող ֆիզիկական անձանց վերաբերյալ,
"Խնդրող կողմ"՝ օգնություն ստանալու համար դիմող կողմ,
"որոնման եւ փրկարարական աշխատանքներ"՝ աշխատանքներ, որոնց նպատակն է փրկել մարդկանց եւ պահպանել արտակարգ իրավիճակի վայրում գտնվող նյութական ու մշակութային արժեքները եւ շրջակա միջավայրը, ինչպես որ դրանք որոշված են միջազգային իրավասու մարմինների կողմից:
"տարանցման պետություն"՝ յուրաքանչյուր պետություն, որի կառավարությունը Կողմ է հանդիսանում, բացառությամբ Խնդրող կամ Օժանդակող պետության, որոնց տարածքով՝ ներառյալ օդային տարածքի եւ/կամ տարածքային ջրերի, փոխադրվում են Օգնության խումբը, օգնության հանդերձանքը եւ սարքավորումներն ու բեռները:

ՀՈԴՎԱԾ 3 Սկզբունքներ

1. Սույն Համաձայնագրի դրույթներին, ինչպես նաեւ միջազգային հանրաճանաչ սկզբունքներին եւ կարգավորումներին համապատասխան, Կողմերը կհամագործակցեն բնական եւ տեխնաժին աղետների եւ/կամ, դրանց հնարավորության դեպքում, կարելու է հրատապ տեղեկատվություն եւ օգնություն տրամադրելու համար:
2. Եթե Կողմը իր պետության տարածքում տեղի ունեցած բնական կամ տեխնաժին աղետի դեպքում օգնության կարիք ունի, այդ Կողմը կարող է օգնություն խնդրել մյուս Կողմից /Կողմերից/՝ ազգային դիմումի ներկայացման միջոցով: Օժանդակող Կողմը /Կողմերը/ օգնում է Խնդրող կողմին՝ աղետի կանխարգելման եւ/կամ հետեւանքների վերացմանը նպատակաուղղված ձեւերով եւ միջոցներով:
3. Կողմերը օգնություն ցույց կտան միմյանց իրենց հնարավորություններին համապատասխան: Օգնությունը կտրվի անվճար, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:
4. Խնդրող Կողմը կապահովի օգնության բեռների անարգել ստացումը եւ դրանց բաշխումը բացառապես տուժած բնակչությանը: Օգնության բեռները բաշխվում են առանց որեւէ ռասայական, կրոնական, լեզվական եւ քաղաքական կամ այլ գործոններից կախված խտրականության:

ՀՈԴՎԱԾ 4 Օգնություն ստանալու եւ տեղեկատվության փոխանակման դիմում

1. Կողմերը արտակարգ իրավիճակներում օգնություն խնդրելու համար պետք է լիազորեն մարմիններին:
2. Օգնությունը կտրամադրվի դիմումի հիման վրա, որտեղ Խնդրող Կողմը նշում է.
- աղետի տեղը, ժամը, բնույթը եւ ծավալները, ինչպես նաեւ տուժած վայրում

ճգնաժամի ընթացքի վիճակը,

- արդեն ձեռնարկված միջոցները, պահանջվող օգնության բնորոշումը, աղետների

հաղթահարման համար անհրաժեշտ առաջնային օգնության տեսակը:

3. Օժանդակող կողմը պետք է անհապաղ որոշում ընդունի օգնություն ցույց տալու վերաբերյալ եւ Խնդրող կողմին տեղեկացնի օգնության փոխադրման ծավալների

եւ պայմանների մասին:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը պետք է նորացվի՝ հետեւելով իրավիճակի զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Տարանցում

Խնդրող կողմի դիմումի հիման վրա տարանցման պետության կառավարությունը պետք

է անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերի իր պետության տարածքով օգնության անարգել տեղափոխման ընթացքում՝ իր ազգային օրենսդրությանը, միջազգային իրավունքին եւ պրակտիկային համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

Իրավասու մարմիններ եւ տեղական կետեր

1. Սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված աշխատանքները համակարգելու

համար, Կողմերից յուրաքանչյուրը նշանակում /կամ սահմանում/ է մեկ կամ մի քանի

իրավասու մարմիններ, այսուհետ՝ "իրավասու մարմիններ":

2. Առանց վնաս հասցնելու գոյություն ունեցող այլ երկկողմ եւ բազմակողմ համաձայնությունների, յուրաքանչյուր Կողմ կնշանակի կամ կստեղծի արտակարգ

իրավիճակների դեպքում տեղեկություններ հաղորդող եւ օգնություն հատկացնող մեկ

կամ մի քանի իրավասու տեղական կետեր:

3. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր կծանուցեն իրավասու

մարմնի /մարմինների/, ինչպես նաեւ տեղական կետի /կետերի/ վերաբերյալ ցանկացած

փոփոխության մասին:

4. Յուրաքանչյուր Կողմ կապահովի իրավասու մարմնի /մարմինների/ եւ տեղական

կետի /կետերի/ անխափան գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 7

Արտակարգ իրավիճակների Աշխատանքային խումբ /կոմիտե/

Սույն Համաձայնագրի կիրառման համար իրավասու ազգային իշխանությունները

կնշանակեն ՄԾՏՀ-ի շրջանակներում ստեղծվող համապատասխան ընդհանուր մարմնի

/Արտակարգ իրավիճակների Աշխատանքային խմբի/ իրենց ներկայացուցիչներին:

ՀՈԴՎԱԾ 8

Արտակարգ իրավիճակների դեպքում օգնության համակարգում եւ կառավարում

1. Խնդրող կողմի իրավասու մարմինը կհամակարգի, կկառավարի եւ կվերահսկի

Օգնության խմբի գործողությունները՝ դրա ղեկավարների միջոցով:

2. Խնդրող կողմը Օժանդակող կողմի խմբի ղեկավարներին պետք է տեղեկացնի արտակարգ իրավիճակի վայրում եւ գործողությունների կոնկրետ տեղամասերում իրավիճակի զարգացման մասին եւ, անհրաժեշտության դեպքում, այդ խմբերին ապահովի

թարգմանիչներով եւ կապի համար անհրաժեշտ միջոցներով այն շտաբի հետ, որն իրականացնում է որոնողական, փրկարարական եւ անհետաձգելի այլ աշխատանքների

ընդհանուր կառավարումը:

3. Օգնության խմբերի սարքավորումները պետք է բավարարեն ժամանման պահից 72

ժամվա ընթացքում արտակարգ իրավիճակի գոտում գործողությունների կատարման համար:

Խնդրող կողմը, տվյալ ժամկետը լրանալուց հետո, պետք է ապահովի այդ խմբերին

բոլոր անհրաժեշտ առարկաներով՝ նրանց խնդրանքի հիման վրա:

4. Խնդրող կողմը պետք է ապահովի Օգնության խմբերի անդամների անվտանգությունը, անվճար բուժսպասարկումը, սնունդն ու կացարանը, ինչպես նաեւ

տրամադրի առաջին անհրաժեշտության առարկաներ՝ նրանց սեփական պաշարների սպառման

դեպքում:

ՀՈԴՎԱԾ 9

Օգնության խմբերի կողմից սահմանն անցնելու կարգը եւ մնալու կանոնները

1. Խնդրող կողմի կամ տարանցման պետության սահմանն Օգնության խմբերի անդամների կողմից անցնելու կարգը պետք է սահմանվի դրանց ազգային օրենսդրությամբ, միջազգային իրավունքով եւ Խնդրող եւ/կամ տարանցիկ պետության

երկկողմ համաձայնագրերով:

2. Խնդրող կողմի սահմանով շնավարժ խմբերի անցնելու եւ Խնդրող կողմի պետության տարածքում դրանց մնալու կարգը պետք է սահմանվի յուրաքանչյուր դեպքում Խնդրող կողմի պետության տարածքում գործող կարանտինային կանոններին

համապատասխան:

3. Օգնության խմբերի անդամները պարտավոր են պահպանել Խնդրող կողմի եւ/կամ

տարանցման պետության պետական օրենքներն ու կանոնները: Միեւնույն ժամանակ

աշխատանքային եւ այլ համապատասխան օրենսդրության առումով նրանք գտնվում են

Օժանդակող կողմի իրավասության ներքո:

Այն դեպքում, երբ այդ խմբերը ներառում են իրենց կազմի մեջ քաղաքացիական

պաշտպանության ռազմական անձնակազմ, նրանց մնալն, ըստ նախնական պայմանավորվածության, եւ գործունեությունը կկարգավորվեն Օժանդակող կողմի նման

անձնակազմի կարգավիճակը կարգավորող օրենսդրության համաձայն:

4. Օգնության խմբերի, նրանց սարքավորումների եւ օգնության բեռների փոխադրման նպատակների համար՝ դրանք հնարավորին սեղմ ժամկետներում նպատակատեղ

հասցնելու համար, կարող է օգտագործվել համապատասխան տրանսպորտային միջոցներից

ցանկացածը:

Օգնության փոխադրման համար տրանսպորտի հատուկ միջոցների օգտագործման կարգը

կսահմանվի Կողմերի իրավասու մարմինների կողմից:

ՀՈԴՎԱԾ 10

Օգնության միջոցների եւ բեռների ներմուծումը, արտահանումը եւ տարանցումը

1. Օգնության նպատակների համար ներմուծվող եւ արտահանվող օգնության սարքավորումներն ու ապրանքները, ի կատարումն սույն Համաձայնագրի, կազատվեն

մաքսային տուրքերից, հարկերից եւ վճարումներից:

2. Օգնության սարքավորումների եւ ապրանքների մաքսային ստուգումն ու հսկողությունը պետք է իրականացվի պարզեցված ձևով առաջնության կարգով՝ Կողմերի

իրավասու մարմինների կողմից տրված ծանուցագրերի հիման վրա, որոնցում նշվում է

օգնության խմբերի կազմը եւ ներմուծվող ու արտահանվող օգնության սարքավորումների եւ բեռների ցուցակը:

3. Թմրամիջոցներ եւ հոգեներգործուն նյութեր կարող են ներմուծվել միայն բժշկական օգնության համար անհրաժեշտ քանակությամբ եւ օգտագործվել միայն

որակյալ բժշկական անձնակազմի կողմից: Այս դեպքում Օգնության խմբի ղեկավարը

պետք է մաքսային հսկողության մարմիններին ներկայացնի հայտարարագիր՝ թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի ցանկով, նշելով դրանց նոմենկլատուրան եւ գումարը:

Խնդրող կողմի համապատասխան իշխանությունները կարող են հսկողություն իրականացնել վերոհիշյալ միջոցների եւ նյութերի օգտագործման եւ պահպանման

նկատմամբ:

Առաքելության ժամանակ չօգտագործված թմրամիջոցներն ու հոգեներգործուն նյութերը պետք է դուրս հանվեն Խնդրող կողմի պետության տարածքից: Առաքելության

ավարտից հետո պետք է ներկայացվի օգտագործված թմրամիջոցների եւ հոգեներգործուն

նյութերի մասին փաստաթուղթ՝ Օգնության խմբի ղեկավարի եւ բժշկի ստորագրությամբ

եւ Խնդրող կողմի համապատասխան իշխանությունների կողմից նշանակված իրավասու

մարմնի հաստատմամբ:

ՀՈԴՎԱԾ 11
Օդանավ

1. Օգնության խմբերի, օգնության սարքավորումների, բեռների ու ապրանքների փոխադրումը կարող է իրականացվել օդանավերի միջոցով:

2. Տրամադրող կողմի իրավասու մարմինն պետք է տեղեկացվի օգնություն ցույց տալու նպատակով օդանավեր օգտագործելու որոշման մասին՝ նշելով վայրէջքի վայրը,

թռիչքների երթուղին, օդանավի տեսակն ու տարբերակիչ նշանները, անձնակազմի

անդամների թիվը, բեռի տեսակը, չվացուցակը եւ ուղեւորների կազմը /աշխատակազմ,

տեխնիկական անձնակազմ, լրագրողներ եւ այլն/:

3. Օդանավի թռիչքները, քաղաքացիական կամ պետական, պետք է իրականացվեն

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության /ICAO/ եւ Կողմերի

կանոններին համապատասխան:

Պետական օդանավի համար եւս պահանջվում է դիվանագիտական դյուրացում:

4. Օժանդակող կողմի՝ սույն Համաձայնագրով նախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում օգնություն ցույց տվող օդանավերն ազատվում են անցաթիռի,

վայրէջքի, կանգառի, վերթիռի եւ նավագնացության ծառայությունների համար վճարներից:

5. Արտակարգ իրավիճակների ժամանակ օգնություն տրամադրող օդանավերի թռիչքների դեպքում օդանավերի վառելիքի եւ տեխնիկական սպասարկման ծախսերի հետ

կապված հարցերը, յուրաքանչյուր առանձին դեպքում, պետք է կարգավորվեն սույն

Համաձայնագրով՝ համապատասխան Կողմերի իշխանությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 12
Օգնություն

Օգնության տրամադրումը պետք է իրականացվի սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 13

Արտակարգ իրավիճակների դեպքում ցույց տրվող օգնության համար ծախսերի փոխհատուցում

1. Խնդրող կողմը կարող է ցանկացած պահին չեղյալ հայտարարել օգնություն ցույց տալու մասին իր խնդրանքը:

Խնդրող կողմը անմիջապես պետք է տեղեկացնի Օժանդակող կողմին իր որոշման

մասին, իսկ Օժանդակող կողմը կարող է պահանջել մինչեւ տվյալ պահը կատարված

ծախսերի փոխհատուցումը:

2. Օժանդակող կողմը պետք է ապահովի Օգնության խմբերի անդամների ապահովագրումը եւ այդ ծախսերը պետք է ներառվեն օգնություն ցույց տալու

ընդհանուր ծախսերի մեջ:

3. Օժանդակող կողմի իրավասու մարմինը օգնություն ցույց տալու աշխատանքներն ավարտելուց անմիջապես հետո հսկողող կողմի իրավասու մարմինն գրավոր պետք է տեղեկացնի ցույց տրված օգնության մասին:

4. հսկողող կողմի իրավասու մարմինը Օժանդակող կողմի իրավասու մարմինն ներկայացնում է ամփոփիչ տեղեկատվություն, որը բովանդակում է արտակարգ իրավիճակի բնութագիրը եւ ծագման պատճառները, ստացված օգնության ձեւն ու ծավալը եւ կատարված աշխատանքի արդյունքները:

ՀՈԴՎԱԾ 14 Վնասի փոխհատուցում

1. հսկողող կողմը պետք է հատուցի սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված գործողությունների իրականացման ընթացքում Օգնության խմբերի անդամների առողջությանը հասցված վնասի կամ նրանց մահվան հետ կապված բոլոր ծախսերը:

Շահագրգիռ Կողմերը կհամաձայնվեն փոխհատուցման գումարի վերաբերյալ:

2. Եթե Օգնության խմբի անդամը հսկողող կողմի պետության տարածքում սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված առաքելության ժամանակ վնաս է պատճառում

իրավաբանական կամ ֆիզիկական անձի, այդ վնասը պետք է փոխհատուցվի հսկողող կողմի

կողմից՝ համաձայն իր քաղաքացիների կողմից օգնություն ցուցաբերելիս վնաս պատճառելու դեպքում կիրառվող իրավական կարգավորումների:

3. Օգնության խմբի անդամի ղեկավարությամբ դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ հասցված վնասը պետք է հատուցի Օժանդակող կողմը, եթե վնասի փաստը

ապացուցվել է հսկողող կողմի դատական ատյանի կողմից:

ՀՈԴՎԱԾ 15 Անձնական տվյալների հաղորդում

Սույն Համաձայնագրի շրջանակներում անձնական տվյալների հաղորդումը այլ Կողմերին պետք է իրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող

Հավելված 1-ին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 16 Համագործակցություն միջազգային եւ ազգային կազմակերպությունների /հաստատությունների/ հետ

Մասնակից Կողմերը, փոխադարձ պայմանավորվածության հիման վրա, կարող են

իրավիքել շահագրգիռ միջազգային եւ ազգային կազմակերպություններին /հաստատություններին/՝ մասնակցելու սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված

միջոցառումներին:

ՀՈԴՎԱԾ 17
Ստորագրում

Սույն Համաձայնագիրը բաց է ստորագրման համար ՍԾՏՀ յուրաքանչյուր պետության կողմից:

ՀՈԴՎԱԾ 18
Վավերացում, ընդունում, հաստատում, հավանության արժանացում կամ միացում

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման, ընդունման, հաստատման, հավանության արժանացման կամ միացման:

Վավերացման, ընդունման, հաստատման, հավանության արժանացման կամ միացման

փաստաթղթերը հանձնվում են սույն Համաձայնագրի Ավանդապահին:

2. Սույն Համաձայնագրի ավանդապահը Ռուսաստանի Դաշնության կառավարությունն

է, որը պետք է Կողմերին ուղարկի վերոհիշյալ փաստաթղթերի հաստատված պատճենները:

ՀՈԴՎԱԾ 19
Համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ դրա գործողության ժամկետը

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում առնվազն վեց պետությունների վավերացման, ընդունման, հաստատման, հավանության արժանացման կամ միացման

փաստաթղթերը Ավանդապահին հանձնելուց հետո եւ կնքվում է անորոշ ժամկետով:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում, ընդունում, հաստատում, հավանության է արժանացնում սույն Համաձայնագիրը կամ միանում է

դրան՝ վավերացման, հաստատման, ընդունման, հավանության արժանացման կամ միացման

ճ-րդ փաստաթուղթը ավանդապահին հանձնելուց հետո, սույն Համաձայնագիրը ուժի մեջ

է մտնում այդ պետության վավերացման, ընդունման, հաստատման, հավանության

արժանացնելու կամ միացման փաստաթուղթը Ավանդապահին հանձնելու օրը:

ՀՈԴՎԱԾ 20
Համաձայնագրից դուրս գալը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ Ավանդապահին ներկայացնելով այդ փաստի մասին մյուս Կողմերին տեղեկացնող գրավոր

ծանուցագիր:

2. Համաձայնագրից դուրս գալը իրականացվում է Ավանդապահի կողմից այդպիսի

ծանուցում ստանալու ամսաթվից հետո՝ 90-րդ օրը:

3. Յուրաքանչյուր կողմ, որը ցանկանում է սույն Համաձայնագրից դուրս գալ ավելի շուտ, պետք է համապատասխանաբար գրավոր ծանուցի Ավանդապահին: Ծանուցումը պետք է կատարվի ոչ ուշ քան դուրս գալու համար դիմումի ներկայացնելուց հետո 30 օրում:

ՀՈԴՎԱԾ 21

Սույն Համաձայնագրում կատարվող լրացումներ

1. Յուրաքանչյուր կողմ կարող է առաջարկել սույն Համաձայնագրում լրացումներ

կատարել:

2. Լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկը գրավոր պետք է ներկայացվի

սույն Համաձայնագրի 7-րդ Հոդվածում նշված Աշխատանքային խմբին /կոմիտեին/, որն

այնուհետև այդ մասին կտեղեկացնի բոլոր կողմերին: Այդ ուղղությամբ ձեռնարկվելիք հետագա գործունեության տեսակը նշում է Աշխատանքային խումբը՝

Կողմերի կողմից որոշված իր մանդատին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 22

Փոխհարաբերությունն այլ միջազգային համաձայնագրերի հետ

Սույն Համաձայնագիրը չի շոշափի այլ միջազգային համաձայնագրերով կողմերի

ձեռք բերված իրավունքներն ու ստանձնած պարտականությունները:

ՀՈԴՎԱԾ 23

Վեճերի կարգավորում

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի

Կողմերի միջև անհամաձայնության առաջացման դեպքում, Կողմերը կլուծեն այն բանակցությունների միջոցով եւ, եթե անհրաժեշտ լինի՝ դիվանագիտական ուղիներով:

ՀՈԴՎԱԾ 24

Համաձայնագրի լեզուն

Սույն Համաձայնագրի բնօրինակը կատարված է անգլերեն լեզվով:

Ստորագրված է Սոչի քաղաքում, 1998 թ. ապրիլի 15-ին:

Ի հաստատումն վերոհիշյալի, լինելով պատշաճորեն լիազորված, ստորել թվարկվածները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Հավելված 1

Անձնական տվյալների փոխանակում

Սույն Համաձայնագրի շրջանակներում եւ Կողմերի պետությունների օրենսդրության սահմաններում անձնական տվյալների փոխանակման կանոնները հետեւյալն են.

1. Ստացող կողմի կողմից տվյալների օգտագործումը թույլատրվում է Հաղորդող

կողմի կողմից սահմանած նպատակների համար եւ պայմաններով:

2. Ստացող կողմը, Հաղորդող կողմից հարցում ստանալու դեպքում, վերջինիս պետք է տեղեկացնի անձնական տվյալների օգտագործման եւ դրանցով ձեռք բերված

արդյունքների մասին:

3. Անձնական տվյալները հաղորդվում են միայն իրավասու մարմիններին: Անձնական տվյալների հետագա փոխանակումը հնարավոր է միայն Հաղորդող կողմի

թույլտվությամբ:

4. Հաղորդող կողմը պարտավոր է տրամադրել հաղորդման նպատակներին համապատասխանող հավաստի տվյալներ՝ հաշվի առնելով համապատասխան ազգային

կանոնները: Ստացող կողմը, սխալ կամ չթույլատրված տվյալներ ստանալու դեպքում

ուղղում է սխալները կամ տվյալներն ամբողջությամբ ոչնչացնում է:

5. Ցանկացած անձ, որին վնաս է հասցվել իրեն վերաբերող անձնական տվյալների

օգտագործմամբ, իրավունք ունի դիմել տվյալների օգտագործման վկայագիր ստանալու

համար՝ այդ տվյալների օգտագործման նպատակները ներկայացնելուց հետո: Եթե

հասարակական շահերը գերազանցում են տուժած անձի շահերը, վերջինս կորցնում է

վերը նշված իրավունքը: Ցանկացած այլ դեպքերում այդ անձն իրավունք ունի ստանալ

սերտիֆիկատ՝ այն պետության ազգային օրենսդրության համաձայն, որի տարածքում

եղել է պահանջը:

6. Եթե սույն Համաձայնագրի շրջանակներում տվյալներ հաղորդելը որեւէ մեկին

ֆիզիկական կամ բարոյական վնաս է պատճառում, ապա դրա համար պատասխանատվություն

է կրում Ընդունող կողմը՝ իր ազգային օրենսդրությանը համապատասխան: Վնասված կամ

տուժած անձի /անձերի/ հետ գործ ունենալիս, Ընդունող կողմը չի կարող ազատվել

պատասխանատվությունից եւ այն դեպքում Հաղորդող կողմի վրա:

7. Անձնական տվյալների գործողության ժամկետները պետք է ծանուցվեն Հաղորդող

կողմի կողմից՝ իր ազգային օրենսդրության համաձայն:

8. Կողմերը պարտավոր են գրանցել ելքի եւ մուտքի անձնական տվյալները որպես

պաշտոնական փաստաթղթեր:

9. Կողմերը պարտավոր են պաշտպանել անձնական տվյալները՝ իրենց ազգային

դասակարգումով չթույլատրված օգտագործման հնարավորությունից,
փոփոխություններից
եւ հրապարակումներից խուսափելու համար:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել
2003
թվականի մարտի 11-ից: